


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պայմանագրի 8 ՄՅՏ.
Պայմանագրի 40 ՄՅՏ.
Վեցամյա և Պայմանագրի 4 ՄՅՏ.
Պայմանագրի 5 ՄՅՏ.
Օտար երկրներում
Պայմանագրի տողը մեկ անգամի չա-
մար 3 դուրուշ, երկու անգամի չա-
մար 2 դրշ է. առեկի անգամներում
չամար գատ քաղաքական իրեն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 2 դրշոց թուղթ .



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ծ ախար խորագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խորագրի
— Տնօրէնին պիտի ուղղուի , զայն
թիւ Սանտրքըլար շատակսի թիւ
198 , Նօրո խան , Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ , յօդուած , և
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թուրքիոյ վերակազմութեան խըն-
դիրն այս օրերս բանակցութեան
նիւթ եղած կ'երևի Եւրոպական տէ-
րութեանց միջև : Թայմի լրագիրը
կը յայտարարէ թէ Անգլիա թուր-
քիոյ և Եգիպտոսի վրայ առնելիք ու-
նեցողներուն այն է արժեթուղ-
թի տէրերուն շահերն ապահովելու
համար չլինար միջամտել , քանզի
իւր առաջնութեանց դէմ է . սա-
կայն բարեւոյ վարչութիւն մը հաստա-
տելու համար կը միջամտէ : Եւրոպա-
կան խնդիրն այս կերպիւ երկ-
րորդական կարգի կը վերածէ , և
քաղաքական ու առեկի բարձր շահե-
րու առաջնութիւն կուտայ : Արդարեւ
չատ կառավարութիւններ փոխառու-
թիւններ բրած են և հրապարակներն
իրենց արժեթիթերով լինեն : Ասոց
մէ շատերն անկարող կը լինին իրենց
պարտքը վճարելու , և եթէ մեծ տէ-
րութիւններէն ոմանք արժեթիթի
տէրանց առնելիքը միայն պաշտպա-
նեն՝ վերջը զգար , քանզի աշխարհի
ամեն կողմերը գտնուող կառավարու-
թիւններէն իրենց պարտքը չվճարող
ներուն դէմ զօրք լրկել հարկ կը լի-
նի : Բայց Եւրոպա թուրքիոյ նկատ-
մամբ պարտք մ'ունի՝ ըստ դաշնա-
դրութեանց՝ բարեւոյ վարչութիւն մը
հաստատուելու , որով միայն Եւրոպա-
կան հպատակաց առնելիքը կրնայ ա-
պահովել : Վերահսկողութիւն 11րդ նստին
մէջ կոմս Շուվալով ըսած էր թէ
թուրքիոյ եկամտից մէկ երրորդ մասը
միայն այժմ՝ Օսմանեան դիննը կը
մտնէ , որով կ'իմացնէ թէ երկու եր-
րորդն անյայտ կ'ըլլայ պաշտօնատա-
րաց և այլոց սրկորին մէջ , և յարած
էր թէ բարեւոյ վարչութեամբ դոնէ
մէկ երրորդ մ'ալ առեկի հաւաքուի ,
կամ եթէ եկամտից երկու երրորդը
դաննը կարենայ մտնել , Ռուսիոյ առ-
նելիքը կ'ապահովէ : Այս բարեւոյ
վարչութեան պէտքն վրայ տէրու-
թիւնը համաձայն են . բայց ինչպէս
հաստատուելու է դայն , հոն է մեծ
գեթուարութիւնը : Անգլիոյ առանձ-
նական ջանքերն ապարդիւն ելան
տակաւն , և թէպէտ Անգլիան ուղղու-
նայ դաւառը Ռուսական դաւառմէն
ազատելու համար բաւական փտա-
հութեան արժանի միջոցներ ձեռք
տռնուեցան՝ Անգլիայի Պէյքըր վա-
շային խնամքը ոստիկանութիւն (ժան-
տարմա) կազմուելով , սակայն Սիւր-
կովը բնաւ բան մը չեղաւ , ուր հարկ
եղած բարենորոգումներն Անգլիա
մասնաւորապէս երաշխաւորած էր :

Տէպալաքիւրը Պուլաւիոյ իշխա-
նութեան կազմուելուն առթիւ թըրք-

նովայէն առնուած հեռագրաց վրայ
խօսելով կրնէ թէ ասոնք հակապատ-
կեր մը կը ձեռնդնեն Սուրիայէն ու Լի-
բանէն առնուած լուրերու : Պուլա-
ւիոյ վոքրիկ նոր իշխանութեան հա-
մար ամենէն ազատական սկզբանց
վրայ օրէնք և՛ սահմանադրութիւն կը
դրուի , մինչդեռ եթէ Ասիական թուր-
քիոյ դաւառաց վրայ անխորի մը ձեռ-
ուի , կը տեսնուի որ թէ և հոն ևս
անհամբեր կ'ապաստուի բարենորոգ-
մանց , թէ և հրապարակ խոստումներ
տրուած էին նաև այն դաւառաց հա-
մար , սակայն տակաւին այս յոյսերն
իրականայէ հեռի են : Սուրիոյ կու-
սակալ Միտհատ վաշային առաջնու-
կած ծրագիրը դեռ վաւերացած չէ ,
այն ծրագիրը՝ զոր Անգլիա միտք ու-
նէր բոլոր Ասիական դաւառաց հա-
մար իւր տիպար մը բռնել տալ :
Արդէն ծանուցած ենք թէ Անգ-
լիա՝ փոքր Սիւրիոյ բարենորոգմանց
և այլ խնդրոց մէջ չլինալով իւր աշ-
խարհավարութիւնը միայնակ , յառաջ
տանիլ , Ռուսիոյ հետ համաձայնելու
միտում յայտնուաւ : Լորա Տիւֆէ-
րին բեգրապուրիի դեսպան կարգե-
լով , և Սըր Լէյարտը մայրաքաղա-
քէս ետ կանչելով , Սոյս համաձայ-
նութիւնը կեդրոնական Սիւրիոյ վրայ
ալ պիտի տարածի . բայց արդեւ
Պալքաններուն և Արեւելեան Ռումէ-
լի խնդրոյն ևս պիտի վերաբերի .
ոմանք կը կարծեն թէ Գաղղիա և
Անգլիա միաբան են պիտի ելու որ ըստ
Պէրլինի դաշնագրին Օսմանեան զօր-
քը Պալքանները պահպանէ , և եթէ
պէտք լինի՝ Արեւելեան Ռումէլիի դա-
ւառը մտնէ : Բայց Պուլաւը ասոր
գիմադրելու կը պատրաստուէին , և
թերեւորայէն հեռագիր մը կրնէ թէ և
բեախիտանայ ժողովը յանձնախումբ
մը կազմուի է այս խնդրոյն վրայ մեծ
տէրութեանց ուղղելի յիշատակաւ
մը խմբագրելու համար : Պուլաւնե-
րը կաշխատին և հաւանական է որ
հուսկ ուրեմն այս խնդիրը նկատու-
ղութեան առնուի , մանաւանդ որ
գեսպանախորհրդի մը զրոյցները լը-
րագրաց մէջ դարձեալ կը յեղյոյն
Ըստ Տէպալայի , վերջին պատերազմին
մեծ եղբակացութիւններէն մին եղաւ
Օսմանեան կայսրութիւնը բաժնելու
սկզբան հանգիստաւ վաւերացումն ,
և 1878 առաջին բաժանման թուա-
կանն եղաւ : Եթէ այսչափ ծան-
րակշիւ սկզբունք մը կրցաւ վերհա-
ժողովէն անցնել , Պալքաններուն և Ս-
րեւելեան Ռումէլիի խնդիրը խիստ փոքր
կը մնայ անոր քով : Բայց բաղձալի է
որ Եւրոպա ամեն շնորհ մի միայն
Սլավաց չընելով , թուրքիոյ ուրիշ դա-
ւառաց դաշնագրով իրաւունք ստա-
ցած շահերն ևս ապահովելու բարե-
հաճի : Եթէ դաշնագիրը պիտի կա-
տարեւապէս գործադրի , պէտք չէ
որ Պուլաւներն անկէ դուրս շահեր

ձեռք բերեն՝ ի վնաս իրենց հին հա-
րենակցաց շահերուն :

Անգլիական թայմի լրագիրը Ռու-
սիոյ կայսեր կողմանէ վաւերացեալ և
Պուլաւիոյ լրագրացին ժողովոյն ներ-
կայացեալ Սահմանադրութեան ծը-
րագրին հետեւեալ բովանդակութիւնն
հրատարակած է , զոր արժան կը հա-
մարձը մեր ընթերցողաց ներկայեւ :

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՈՒԼԱՎԻՈՅ

- 1.—Պուլաւիոյ երկիրը չլինար
աւելնալ կամ նուազիլ՝ առանց Սահ-
մանագրի Ընդհ. ժողովոյ հաւանու-
թեան :
- 2.—Սահմանագրի ո' և է ուղղու-
թիւն , երբ գիւղերէ կամ քաղաքնե-
րէ չանցնի , կրնայ սովորական ազգա-
յին ժողովոյ որոշմամբ կատարիլ :
- 3.—Պուլաւիոյ իշխանութիւնը
ժառանգական և սահմանադրական
միապետութիւն մ'է՝ Բ. Դրան գե-
րիշխանութեան ներքեւ :
- 4.—Իշխանը պետութեան ներկա-
յացուցիչն և գերագոյն դուլին է :
- 5.—Պուլաւիոյ իշխանը «պայծա-
ռավայր բարձրութիւն» սխաղոսը կը
կրէ . իսկ գահաժառանգը լի «բարձ-
րութիւն» տիտղոսը :
- 6.—Պուլաւիոյ իշխանը Պուլա-
ւիոյ մէջ գահակալած ժամանակ՝ չը
կրնար ուրիշ պետութեան մը գլուխ
լինիլ՝ առանց ազգային սահմանագիր
ժողովոյ հաւանութեան :
- 7.—Իշխանին անձը նուիրական և
անբռնաբարելի է :
- 8.—Իշխանին տրուած օրէնսդրա-
կան իշխանութիւնն ազգային ժողո-
վոյ քուէարկած օրէնքները կը հա-
տառէ և կը հրատարակէ :
- 9.—(Սոյն յօդուածը մուշուած
է հեռագրին փոխադրութեան մէջ) :
- 10.—Իշխանն երկրին բոլոր զինուո-
րական զօրութեանց գերագոյն հը-
րամանատարն է թէ խաղաղութեան
և թէ պատերազմի ժամանակ : Զին-
ւորական պաշտօնները կը բաշխէ կադ-
մական օրինաց համամաս , և զինուո-
րական ծառայութեան մասող ան-
ձինք հաւասարմութեան երգումպի-
տի տան իշխանին :
- 11.—Գործադիր իշխանութիւնն
իշխանին տրուած է : Այս իշխանու-
թեան բոլոր պաշտօններն անոր
հսկողութեան ներքեւ կը գործեն :
- 12.—Դատական իշխանութիւնն
իւր ամեն ճիւղերով դատական ատ-
եաններուն և յանուն իշխանին գոր-
ծող անձանց յատկացեալ է : Իշխանին
և դատական ատեաններուն յարա-
բերութիւններն յատուկ օրէնքով պի-
տի սահմանուին :
- 13.—Իշխանն իրաւունք ունի
դատաւճիւռները մեղմոցնելու՝ եղեւ

նական օրինադրքին տրամադրութեան
համեմատ :

- 14.—Իշխանն իրաւունք ունի նա-
և ոճրագործաց պատիժը շնորհելու ,
բայց քաղաքական , անցաւորաց նե-
րու շնորհելու իրաւունքն հաւաքա-
բար իշխանին և ազգային ժողովոյն
կը վերաբերի :
- 15.—Պատիժները մեղմացնելու
իշխանական իրաւունքն՝ ազգային
սահմանագրութիւնը բռնաբարելու
ամբաստանութեան ներքեւ զտնուող
նախարարաց վրայ չտարածիր :
- 16.—Իշխանը Պուլաւիոյ ներկա-
յիւն է օտար պետութեանց հետ ու-
նեցած ամեն յարաբերութեանց մէջ :
Իւր անուամբ և ժողովոյն հաւանու-
թեամբ միայն կը կնքուին ուրիշ տէ-
րութեանց հետ ներքին գործոց վե-
րաբերեալ պայմանագրութիւններն :
- 17.—Իշխանին հրամանները վա-
ւերական չեն մինչև որ ձեռնհաս
նախարարէն ստորագրեալ չլինին :
- 18.—Իշխանը պարտի իշխանու-
թեան երկրին մէջ բնակիլ միշտ Բա-
ցակայութեան ժամանակ , խնամակալ
մը պէտք է անուանէ , որ յատուկ օ-
րէնքով սահմանեալ իրաւունքներ և
պարտականութիւններ պիտի ունե-
նայ : Այս բացակայութիւններն և իւր
նամակալի անուանումները պէտք է
երկրին ծանուցուին՝ իշխանին կողմէ
հրատարակեալ յայտարարութեամբ :
- 19.—Գահաժառանգն ալ պար-
տի իշխանութեան երկրին մէջ բնա-
կիլ , և առանց իշխանին հաւանու-
նութեան չկրնար մեկնիլ :
- 20.—Պուլաւը պետութեան զի-
նանշանը թխարակ մեղք վահանի մը
վրայ սկիւէ առիւծ մ'է :
- 21.—Պետութեան կնքոյն վրայ
իշխանութեան զինանշանը քանդակ-
ւած է :
- 22.—Իշխանական տիտղոսը ժա-
ռանգական լինելով՝ անդրանիկ որդե-
ւոյն կանցնի :
- 23.—Գահակալող իշխանն և իշ-
խանուհին , ինչպէս նաև գահաժա-
ռանգը՝ 18 տարեկան եղած ժամա-
նակին չափահաս կը լինին :
- 24.—Երբոր գահակալ իշխանը չու-
րահաս չէ , խնամակալութիւն մը կան-
ւանի՝ մինչև որ ի չափ հասնի :
- 25.—Այս պարագային մէջ երեք
խնամակալ պէտք է ընտրուի սահ-
մանագիր ժողովէ մը :
- 26.—Գահակալող իշխանը կրնայ
իւր կենդանութեան ժամանակ իւր
նամակալներն անուանել եթէ գահա-
ժառանգը տակաւին անչափահաս է .
բայց սահմանագիր ժողովոյ հաւանու-
թեամբ միայն կրնայ ընել :
- 27.—Խնամակալները կրնան ընտ-
րուիլ իշխանին ազգականաց , նախա-
րարաց , գերագոյն տոնէի անդամոց
և այն անձանց մէջէն՝ որք առաջնուց
այդ պաշտօնները վարած են՝ առանց

քաղաք է մեր սիրելի համազոր եղբայրք վերայ :

Եւ արդարեւ այնպէս ալ եղաւ , ինչպէս դուք եւ երէկ խիստ լաւ ասած էք թէ՛ ձեզի վերաբերեալ իւր սովորական գէշքերով յաղթանակը տարաւ , չափաւ հասունեանց բերդը ներսէն տանդով :

Քիւրէշեան Գեր. Յօշան եպիսկոպոս , տնտեսեալ պատրիարք Հոկահատեան Հայոց , կը դառնայ վերադարձ Հոռոմայ Պապին գիրքը՝ չկարելով տուիլ նորա ճնշող ձեռաց ծանրութեան ներքեւ , եւ ինքզինքը կ'ազատէ նորա զանազան բռնութիւններէն՝ թողով որ զինքը պատրիարքը ընտրող ժողովուրդը բոլորովին ճշդութիւն և ճշմութիւն : Բայց արդեօք Գեր. Քիւրէշեան իւր խղճի խայթերէն ալ կըրցաւ ազատիւն և անդորր ու խաղաղ մնալ հոգեւով : Հասն հաւանական է , ըսնողի Հոռոմայեան Պապական—կաթողիկոս մը պէտք է դադարի իւր մտքին , իւր սրտին , իւր խղճին և իւր հոգիին տէր լինելէ , և կոյր հնազանդութեամբ սարկի մեքենաւ բար ընդ ԱՆՍՈՒԱՆ գերիշխանութեամբ Պապին :

Սաղայն՝ որպէս զի չկարծուի թէ Գեր. Քիւրէշեան Յօշան եպիսկոպոս՝ Հըռոմայեան եկեղեցւոյ վարդապետութեանէն չէնջողով՝ Գեր. Հասունեան Անտօն եպիսկոպոսի լուսնաբարութեանց զէմ գործելու համար միայն յանձն առած էր Պապական Ուէշէքէ-բէ-թի-իմիդի զինանշանը և Պատրիարք լինել , ևս այս կարծիքը պիտի ջրեմ մի ստույգ և հաւատարմ պատմութեամբ՝ որ հասարակաց զիտութեան կարեւոր է :

1875 թուականին մարտ ամսոյ 20 ին չինգարթի օրը ժամը 7ին սոյն Գեր. Քիւրէշեան Յօշան պատրիարքն այցելութեան եկաւ մեր Ազգային Պատրիարքարանն առ Ամեն Տ. Ներսէս Ա. Պատրիարք Հայոց մեր , իրեն հետ ունենալով Գեր. Մովսէս եպիսկոպոս Ամպէրպոյեան , Վեր. Գրիգոր վարդապետ Լեւոնիսեան և Վեր. Սահակաւոս վարդապետ Եղգըճեան : Սովորական և քաղաքավարական խօսակցութենէ յետոյ՝ ընտանեաց արգելադրանքներով միայն խօսք բացուելով , իրեն մի ժողովուրդը Հայ ազգին բարեօրոնման ու յառաջդիմութեանը պէտք է աշխատինք , ասաց մեր Ս. Պատրիարքը Հայոց , վերջնելով երկու ժողովուրդեան մէջէն խորակալութիւններն , որպէս զի կարենան զիրար սիրել իրեն համարիւն եղբայր : Ի պատասխան այս խօսքին՝ Գեր. Քիւրէշեան ասաց եւանդով . Սըրբազան Տէ՛ր , մեր մէջ խորութիւն զընդունելի սկզբանէ ի վեր Հռոմ եղած է , և այս վերջին տարիներէ Հռոմ բոլորովին հակաքրիստոնէական ընթացք ունեցաւ , և հեռացաւ իւր նախնի առաքելական դասէն : Այս ըսածս չէ թէ միայն մեր ազգային իրաւունքները Պապին ձեռքերունէն յափտակելու ուղիուն համար կըսեմ , ևս ինքզինքն անկողնալ հրատարակելուն և միահեծան դուրս եկեղեցւոյ տնտեսաներուն դէմ , որ Աստուածընդդէմ մուրթութիւն է : Հիմա մեր այս կոյր հնազանդութեան քոյր պատմութիւն մէկը եղանք նորա կարծեցեալ իրաւասութենէն , վասնզի Հռոմայ եկեղեցին Հայաստանեայց եկեղեցւոյ սրբութիւնն ու ինքնօրինութիւնը ի վաղուց ընդունած է , և չէ կարող մեր վրայ տիրապետել :

Գեր. Քիւրէշեանի բանից Ամեն ասացին իւր հետ դանդաղ եկեղեցականաց և մեր Սրբազան Պատրիարքը հայրն ալ պատասխանեց . « Գոհանամ զԱստուծոյ , որ այսօր այն խօսքերը կը խօսի մեզնէ քա՛նքա՛նք Հայոց Պատրիարքը , ճիշդ այնպէս ինչպէս կը խօսէին ասկէ 40 կամ 50 տարի յառաջ իմ նախորդներս Ս. Պատրիարքերը սոյն այս յարկին և ուրբանին մէջ , երբ միութեան խորհուրդը կընէին ընդ Հռոմէականացեալ Հայոց և արեւմտի ինչ կայ այլ ևս ընդ Հայոց և ընդ Պապին , և ինչո՞ւ համար Հայք բաժնուած մնան Պապի մը համար . . . »

Գեր. Քիւրէշեան և իւր ուղեկիցք իրաւունք տալով՝ զրեթէ միաբերան աւստիցն թէ քիչ ժամանակէն ամեն բան

կարգի դրուելով , Աստուծով միութիւնը կը հաստատուի : Աւ այժմ մեր սիրտ ալ խաղաղ մեր ժողովուրդը ընտելացնելու ազգութեան և ազգային եկեղեցւոյ հետ Զինի տարրիկ մեկնեցան յարգանք ճիշդ ժամը 8 1/2 ին :

Մի և նոյն խօսակցութիւնները տեղի ունեցան նաև երբ մեր Ամեն Սրբազան Պատրիարքը հայրը փոխադարձ այցելութեան գնաց առ Գեր. Քիւրէշեան Պատրիարքն ի 15 մայիս 1875 երեքշաբթի օրը ժամ 6ին ի Բերա ի վարդապետանոյն Ոսկերեան եկեղեցւոյ , և զարմանք պատճառեց ունկնդրաց Գեր. Քիւրէշեանի խօսքերն , զորս իւր յարկին մէջ ալ կըրկնեց առաջի բազմաց աներկիւղ և համարձակ ընդդէմ Պապական եկեղեցւոյ դերիշխանութեան և անխաղաղութեան Պապին , ինչպէս կընայ խօսիլ Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ պաշտօնեայ մը :

Արդ՝ Գեր. Քիւրէշեան այս խօսքերն սոյն ասանկ կ'ամ իւր խղճին թելագործութեամբն ասաց , կ'ամ կեղծաւորութեամբն Այս երկուքն ո՞րն ալ եղած ըլլայ , անարդարանալի է այսօր մարդկութեան և Քրիստոնէութեան առջև , և դատաւարութեան ազգայնութեան առջև , բայց արդար և սուրբ Հռոմայ անխաղաղութեան առջև : Այսին մեր վերադէպ համազոր եղբայրք որ մի կողմէն այսպիսի կեղծաւոր անձանց հաղթութեան ներքեւ կըմնան , և միւս կողմէն Հռոմայ բազմաշնար և բազմաշնար մերեկանութեանց տակ հեծել կուզեն տակաւին : Եկէք , ո՞վ Հասունեան և Հակահասունեան , Գօշճեան և Անտօնեան , Միսիթարեան և Սրբազան եւ եւ կուսակցութիւնը , եկէ՛ք միացէք և մըտէք ընդ դրօշակաւ ձեր հայր և նախնի հայր պաշտօնա՝ Առաքելական եկեղեցւոյն Հայոց , որ այսօր նա միայն է կեղծութեան Հայ ազգութեան , որով ազատ մնալով օտար ազդեցութենէ՝ համաձայն խորհրդի և գործիքի վասն վերականգնութեան ազգիս , զի քաջաբեկեցութեան տեսէ՛ք ինչե՛ր գործեց մինչև ցայժմ , և ինչե՛ր պիտի գործէ առկային Գուր լուսնիս և բարեկիրթ տիտղոսը ձեզ սեղանակալներ կուզէք ամեն առթի մէջ . ցոյց տուէ՛ք ձեր լուսնաւորութիւնը , խղճե՛ք այն կապը որ զձեզ կապած կաշկանդած է . միւսեցէ՛ք այն խարխուղ պատճը որ զձեզ կը բաժանէ ձեր համարիւն և համացեղ եղբայրներէն . կարկեցուցէ՛ք այն լեզուները որ ձեզի մինչև ցայսօր սովորեցուցին հայոցն ձեր հայրերուն պաշտած սուրբ կրօնքը , և ուրանալ ազգութիւնը :

Հետեցէ՛ք ազնիւ Աստուծոյ հետ եղբայր և խմտաբուն Նիքմանեանի օրինակին , և մէկը թողէ՛ք ձեր վրայ զընտած աւերալ անուններն և միայն Հայ անունը Ձեզի բաւական սեղանքը , յորում պարտաւորեալ է Քրիստոնէութիւնը ըստ հաւատոյ և դատաւորութեան երանալը նորէ նախնեաց մերոց Գրիգորի , Ներսիսի , Սահակայ , Մեսրոպայ , Գրեգորի , Մանուկեան , Ենոքաւոյ և այլն , որք առանց Հռոմայ Պապին օգնութեան օգտակար եղան իրենց ազգին և մարդկութեան , և երկնից արքայութեան ժառանգորդ սուրբեր եղան , հանդերձ ժողովուրդով իւրեանց , ինչպէս որ դուք ևս մինչև ցայսօր այսպէս գիտէք :

Ահա՛ ժամանակ ընդունելի , ահա՛ օր իրկութեան :

Մնամ աղօթարար ծառայ Ազգիս 2 մարտ 1875 Եւսէ Գաւ. Միքէլ Կ. Պոլիս—Բերա (Նախնի Պատր. Փոխ.)

ԱՅՆ ԵՒ ԱՅՆԻՔ

Ախալցխայէն հետեւեալ նամակը գրուած է Տիմիթի Մեղրու Հայաստանի լրագրին :

« Գաղթեալի աղբար . « Եստ վախազ ըլլի կը որ հրամանք ըլլաւ . հետ գնալ միջ չեմ եղեր . սէպէտը , Էֆէնդիմ , խի օրթիւղի դաւմաղայններն էին , — Բէշքի հրամանքը ալ լամ զըլլիս , որ երկու երեք տարի է մեր թարաֆները դաւաղար , մեր տէրութենն ու Օսմանցու ինը իրարս հետ կ'ալ կ'ենէին : Դաւ

ղէթածի աղբար , Աստուծ զիւշմինս ցոյց չտայ ալ օրերը , էրթան , մէյնս յետ չդառնան , — Էֆէնդիմ , ոչ կերտածներս դիտէինք , ոչ խմածներս , իրա էնի անիրաւ աճաւադս ոչ էրէսէն , չունքի աղանց փախաւսն մէկ քանի անգամ կ'երեւ նեք . հըմը աս սէֆար , օրհնեալ է Աստուծ , լուսնիւրծանք : — Թանգութենք ըլլամ նեքայոց հըմը , փախաւսնս և փառք Աստուծոյ , պակաս չէ . էսնէֆ օրներ առաջւանս պէս տարա դարտակ չմընայ , թանգ դնով գնեցինք նէ թանգ դնով ալ ծախեցինք : — Գարան աս անգամ ջրի պէս խորջէր կը մեր տէրութենք : Սաղ տարիներով մէկ քանի զուռուշի էրէս չտեսնող Աջաւաղիներն փոցլուցինքն ու Ձաբցիները ալ մէքէրէմ փարի տէր էղան , հըմը խի չինովիկ օլան , որ ալ մէքէրէմ չինուցան : — Էֆէնդիմ , ամիսը 10-15 մանէթով դուրսէ կ'ենող գրադրին , ամիսը թախ 150 մանէթ հալի կուտային , հըմը խա՛ն ու միտալը—չի՛նն ու նշանը ալ հետախորդ : —

« Բանը մ'ըսեմ հեղեհաս , դաւղէթածի աղբար , թէ դուս ալ խեղճ ունենայիք , կուգայիք աս թարաֆներս , բանի մը , գործի մը ալ դու կըլլէիք , — 10 հաղար մանէթ ջէրգդնէիք կ'երթայիք , թէ չէ՛ տարին տասուերկու ամիս դաղէթ տպելով , խէթրդ ջմայ , մարդ չես ըլլի . քու գործը ալ ըլլաւ մեր սէնեալին պէս բան մըն է , տէ՛վի սրէի պէս ոչ կ'երկընայ , ոչ կ'կարծնայ : —

« Հըմը դու քու գործն ինձէն լաւ դիտես , իմ խօսիլս աւերադ է : — Մենք կ'ենա մեր տարաֆն աշխար որ սիրելի մ'ըս լիքիթի տէր եր . ձեզի պէս մարդը , աղբար , ինչը ըլլի եօլլայ կ'երթայ , մեծունաց ըսածին պէս , քեօս հա պունդայ , հա Բաղտատայ . մենք մեղի աշխար որ ոչ կընանք աղեղէնս խիթիւց , ոչ ալ քանի մը կ'երթի յետ ձգէ : —

« Կուրն օրհնաւ եղաւ . նէ , գաղէթածի աղբար , մեր լիւթիւնն աւղօթին ու դուհան Աստուծ սաղթ աս էր , որ մէմ խի Արդահանը ու Բաթումը մեր թարաֆը անցնիր , ալ բան չէինք ուղէ : — Մարքոս , շատուրն ան է , աս էր թէ մէյն՝ մեր սանձաղ մեծնայ , առուտուրներս բացուի , սէնեալքերութիւնը անցնի , փարայ ալ յետ չըլլանք ձգել նէ , դուք ջէնիւմ , մէյն՝ օրինաւոր աղբար : — Մեր բաղէն Աստուծ աւղօթքներս լսեք , Բաթումն ու Արդահանը մեղի անցան , հըմը ես իմ կարծ խելքովս անպէս զէնը կ'ենիմ կը որ , Ախալցխայոցս բանը թերսի հեծաւ : — Ամիս թան տեղը , թանգութենը կը շատնայ , ան թարաֆներէն մեր քաղաքը մարդ . գալու տեղը , մեր քաղաքէն հիմի շատերը ան թարաֆները կ'երթան , ան թարաֆներէն քաղք մուրն , եղը , ալ լուրը , պանիրը հիմի գործը անտեղ իրէն կ'արցնէ , ալ բարո՞ւճ կ'մնայ : —

Աստուծ օտայը մեմ խիմ . մենք ինչ գիւման կ'ենէինք , հիմի ինչ էղաւ . հէրիֆին ըսածին պէս , չաղգամ ցանցինք , լողիլ բուսաւ : — Հէր նէ խէ , տեսները վերջերս ինչ գըլլի : Ես իմ կարծ խելքովս անպէս եմ դաւտեր , որ խի մեր Ախալցխան քանի էրթայ յետ պիտի էրթայ . դու ինչպէս կ'կարծես , գաղէթածի աղբար . . . Մէյն թարաֆէն աղբար , մեր տարան ու դասալէթը , մէկալ թարաֆից չէլիք չէլիք ծախսերուս շատնալն , դահա մէկալ թարաֆէն խի մեր ջրի ջուհիներուն չուրիէն էլլենք , փարան ջրի պէս խորջիւները , ալ ո՞ր մէկը ըսեմ , գաղէթածի աղբար : — Աղբար , մեր քաղքին մէջ անպէս մարդիկ կան որ մեծունաց

ըսածին պէս , տունը չունի հայ աւաղ , դուսը կ'ենէ էքէպուս : Գործերուն , առուտուրներուն կաշես , վրաներուն գլխներուն կաշես , բըռնած գործերուն կաշես , չաղիլ մէթ կը մնալ թիւքիւրով . չորնայ կը : — Մեր մեղացէն առաջութան էսնէֆաւան կարդ . ու կանոնն ալ վերցաւ , որ մարդ հիմի ջահիւրներուն քիչ մը չըռ . փիլի սակ բերէ . եօլուրդ էնէլ չկայ , փախալայ զարնէլ չկայ , եօլ էրքէն չկայ , հէրքէլ իրեն ուղան կ'ենէ : Անցածները 5—10 ուստաբաշի թօփ էղանք գնացինք մեր կալալային քովը , բսինք ջա՛նմ . խի մեր էսնէֆութեան կարդ . ու կանոնը ձիւ , խոր մէյնէ ճանապարհ մը . Յեխալայ փրուաւնի՛ կըսեն , ինչ կըսեն , խի մեր քաղաքն էլ բացէք , աշխար ինչը գլլի : Ան աղան բունեղ մեղի թօփ էրաւ , թէ խի խի ծախսերը գլլին , լըսողի՛ էք , մենք ալ որս հա՛ բսինք , որս է՛ք բսինք , պօչից , ճչից , ալ չխտէմ թէ ո՞րը—որայ էղաւ , ինչ մենք գուրբերութիւն գրեր է կըսին : Աղբար , մի խը մարի հիմիկուսն ժամանալն ալ առանց փարի բան չի ըլլի . ինչ բան որ բանաւ կըսես , քանի մը հաղար մանէթ նոր ծախի դու կը բացաւ . հըմը առաջւանս վախիթը հաղար անգամ լաւ . չէ՛ր , որ չէխտալ թախն ալ առանց փարի , ուսիւրաւ չին ալ . ոչ դիր կար , ոչ գէթալ , իմ շատ լաւ միտքս կուգայ , էրքէրում մի էրքէն կ'ենէինք , 5—10 գործը մէկէն վերջացնէինք կը . դիտի՛ս , դաւղէթածի աղբար , էրքէնին կապածը կապած էր , քալածը քալած : —

« Ըսալ ձեր թարաֆները էսնէֆ օլանք ինչ կարդ . ու կանոններ ունի՛ դաւղէթածի աղբար , տրեւ ոչ սաղախայ , մէմ ինձի գրէ իմանալ : —

« Գիւմու դու խիմ՝ որ աստեց յետեւ կ'ենա հրամանքիդ . հետ դրութիւն էս նիմ , մեր քաղքի խաղաղներն իմնայ տամ , ատոր համար ասանգամ ասքանս հէրիք է , միտս բարով : »

Զէն-Էֆէ

Տէր :

Վասպուրականի ընկերութիւնն իւր ի լոյս ընծայած Բերականէն 30 օրինակ յուղարկած է մեզ Հեռամի Բարութիւն Էֆէնդիմ Զէնճիքեանի ի նուէր քաղաքիս երկու վարժաւանաց աղբարիկ մանկաւոյն :

Վասն օրոյ կը փութամք հըրաւ պարակա . յայտնել մեր խորին շնորհակալութիւնը յիշեալ աղբօգուս ընկերութեան և կաղաչեմք զՁեզ որ դուք ևս բարեհաճէք երկուսդ անիւն մը շնորհէլ ձեր պատուական լրագրոյն մէջ :

20 փետր 1876 Ի զիմաց թաղաւ Ռօտտոթօ խորհրդոյ Ատնապոլիս Ատնապոլիս Թար-Էֆէն Եւսէ Գաւ. Միքէլ

ՌԻԴԱՌԻԻԻՆ ԵՒ

ՎԱՅՐԻՆԱԿԱՆ ՃԵՂՈՒԹԻՒՆ
Ֆրէնկեան վաճառատան բոլոր թիւերն ալ շահալ փրճակատման վաճառութիւն կը գաղթի մարտ 15 ժամ ճիշդ 6 1/2 . մի և նոյն օրը հրապարակաւ ժամ ճիշդ 8ին վիճակահանութիւնը կ'սկսի : Տոմարկալին մէկ արծաթ մէհիս : Բնդ ամենը 272 տոմսակ , որոց մէջն է 720 Գաղղ . ոսկւոյ արծեքով երկու պատկերները որ Աստուծոյ եղբայր թուոյն միայն միջանաւան է : Կը ծախուի Ֆրէնկեան վաճառատան , Ռուսն չարը զլու ի փիլիսոսանի կից :

Ի Լ Ա Ն

Ներդրումը էրդադ. անդարձնա Տա-
րը Շուրառա մահճիւղ նուսնէսի
վէճիւն միւսպիւրա օրնաճադ ալթ-
մըշ պին զը յէ րէթիմօ սապուռնուռն
թարիթի գարարտան իթիպարէն պէ-
հէր մահ օնար պին գըյէսի թէսլիմ
օրնաարագ ալթը մահ նիհայէթիմուէ
արգասը ալթնմագ վէ րէսմ կէօմրիւ-
կի իւէ անպարա թէսլիմիւնէ դատար
քեաթիթի մէսարիթի միւթէհաճիւրի-
նէ պիտ օրնագ վէ թէսլիմիւնի միւ-
պէյիւն վէրիւնէճէք մագպուղ սէնէտ-
լէրիւն լիւրուտիլլէ մուսմէյիսիւնի
իւթիմամնտա էսմանը սիմ մէճիւրիէ
եիկիւրմի զրուշ հիսապիլլէ հէման Նի-
դամիլլէ խաղիւնէսիւնէն վէրիւնէք շար-
թը իւէ պէհէր գըյէսի տէօրթ զրուշ
պէշ փարայա օլարագ թարիպի էօհ-
տէսիւնտէ օլուպ մարթըրուսիւնի պէ-
շիւնէ կիւնիւ միւնադատասը ինրա օ-
լուսնաճաղընտան, իթա իթմէկէ թարիպ
օլանլարըն եէվի մէղքիւրտէ սաաթ
եէտիտէ Տարի Շուրայի ասքէրիլլէ
կէլմէլլէրի :

28 շուսթ 1879
Պապը Թէրաթէրի

ՆԱԿԱՆԻՑՈՒՄ

ՏԱՄԱՏԵՆ ԶՈՒՎԱՐԱՆ

Օրնա 463

Հայ, Տաճիկ և Եւրոպացի տաղա-
րական տաւեր իրենի պմն տեադի-
ներով կը գտնուին սխարատա խիստ
արժան գիներով :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՊԻԾԱԿ

Զ. ԽԱՅԹՈՒՆՅԻ

Այս զուարճալի և օգտակար դոր-
ժին առաջին տետրը կը խօսի աղջը-
կանց շունչով 113 տարի ապրելու
արուեստին վրայ : Մէկ տետրին գինն
է 20 փարանց մէճիւր մը : Իսկ կան-
խիկ քաւորք մէճիւրիէ մը առուոյն ի-
րաւունք պիտի ունենայ 12 տետրի :
որոնք հետզհետէ պիտի հրատարակ-
ուին :

Կեդրոնտետրին է Ղուկասեան գը-
րատուը :

ՀՐԱՆՏ ԱՍՏՈՒՐ

ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆԵՐՇՆԶՈՒՄՆԵՐ

Ուսումնասէր հեղինակն այս գըր-
քուկին մէջ ամփոփած է իւր գըր-
ւածներն, որք պատանեկան հասա-
կի մէջ երկնուած, գեաւհաս հոգ-
ւոյ մ'առաջին զգացումներն և մը-
տածումները կը պարունակեն :

Իր ծախուի խէնի—ճամի Զիլին-
կիլլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղու-
կասեան գրատուը և ուրիշ Հայ գը-
րավաճառաց քով, ի գին 75 սանթիմ :

ՃԱՇԱԿ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱԿ ԼԵՃՈՒՄԻ

Այստապիւրութեամբ Ս. Պապէսեանի

Ազգային հեղինակաց զանազան
գործերէն քաղեալ ընտիր հաւաքա-
ծոյ մ' է թրճակ և Ուսումնար, որով
բանասէրը կրնան կատարեալ ճաշակ
մ'առնուլ արդէ Հայ մատենագրու-
թեան վրայ :

Գործը տպագրութեան յանձնուած
ըլլալով, ծախքը փոքր ի շատէ թե-
թեպնելու համար քաժանորդաց ըու-
թիւն մը բացուած է բոլոր գրովա-
ճառաց քով :

Բաժանորդագրութեան գինն է
2 փրանք, իսկ տպագրութեան յետոյ
3 փրանքի պիտի ծախուի :

ԻՄՐԱԳԻՐ—ՏԵՐԻՆ

Ե. Ս. ԻԹԹԻՆԵԱՆ



ՇԻՐԲԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱԽՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՄԱՐՏ 1 ՀԻՆԴՇԱՔԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆԶԵԻ ՄԱՐՏ 15

ՌՈՍՏՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱԽՆԵՐԸ

Table with 3 columns: No., Name, and Amount. Contains various entries for the 'Shirbeti' fund.

ԱՆԻՆԻՑ ԷՆԵՐԷ

Table with 3 columns: No., Name, and Amount. Continues the list of donors and amounts.

ԱՆԻՆԻՑ ԷՆԵՐԷ

Table with 3 columns: No., Name, and Amount. Continues the list of donors and amounts.



“Կատարելութիւն”
ՄԱՏԵՆՍ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆԻՆ
Լ'Անարհաճանօթ Մաշ Կորոգողը
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR
RESTORER.)

Երբեք չլքեալիւ նորոգելու Լ'Անար
Մաշ իր երկտասարդական գընին,
ընծայելով անոր նոր կեանք, աճում,
և փայլուն գեղեցկութիւն : Իր ար-
դիւնքը ստույգ և կատարեալ է, շուտով
վանելով արեորութիւնը : Երկը մը չէ :

Միշտ կը հաստատէ ինքնին իբր
մազին բնական զօրացուցիչը :

Գլխաւոր Միջերանցը (Մաղաղան) է,—

114 AND 116 SOUTHAMPTON ROW, Լոնտոն, Լոնդոն :

Իր ծախուի ամէն կեդրոնամաճառներն, Լոնտոն շահու իւզալա-
ճառներէն, և Լոնդոնացի Գլխաւորաճառներէն :

Օ Ճ Ա Ո



Ոչնչաճառ օճառ, մորթը կը կակուղցնէ ու լեղի ջուրով ալ կը
փրկուի, տեսալիւ խիստ աղիւ ու գինը շատ աժան է : Կը
ծախուի Կ. Պոլիս Գալաթիա Միւնասեան և ընկերաց Ամերիկա
յի մաղաղան :

Table with 2 columns: No. and Name. Contains entries for the 'Shirbeti' fund.

ԿԱՄՈՒՐՁԷՆ ԵՆՆՈՂ ՇՈԳԵՆԱԽՆԵՐԸ

ԷՆԵՐԷ

Table with 2 columns: No. and Name. Contains entries for the 'Shirbeti' fund.

ԱՆԻՆԻՑ ԷՆԵՐԷ

Table with 2 columns: No. and Name. Contains entries for the 'Shirbeti' fund.

ԱՆԻՆԻՑ ԷՆԵՐԷ

Table with 2 columns: No. and Name. Contains entries for the 'Shirbeti' fund.

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի
բաց ի կիրակի և տոն օրերէ :

Բաժանորդացիութեան տեղն է Գա-
լաթիոյ Սանտրոլլար շատանի թիւ
198 : Նօրօ խան Մասիի խմբագրատու-
նը : Իսկ գաւառաց մէջ հասեալ հոգա-
լարճուաց գրատնեակները :

ԶՄԻՒՆԻՍԻԱ. Ստեփան էֆ. Տէտեան.
ՆԻԿՈՒՄԻՒՍԻԱ. Խոսրով » Էսկիճեան.
ՊՐՈՒՍԻԱ. Ստեփան էֆ. Թանկէրեան.
ՌՈՍՏՈՐԸ. Արթ. Տ. Արիտաղէս ա-
ւաթ քաճանայ Ֆէպեան.
ԱՂԻՍԻՆՆՈՒՄԻՍԻԱ. Ս. Լեւմէճեան էֆէնիւ.
ԱՄԱՍԻԱ. ՍԵՐԱՍԻԱ.
ԵԻՊԹԻԱ. ԽԱՐԵՐԻԱ.

ԵՐԶՆԵԱ. Թաղէս էֆ. Բաղրատուի.
ԿԱՐԻԱ. Կարապետ » Զաքարեան.
ՄՈՒՇ. Միլիալ » Փօթիկեան.
ՎԱՆ. ԲԵՐԻԱ. Սեդրակ » Խորաճեան.
ՏԻԳՐԱՆԱԿԻՐՏ. Թովմաս էֆ. Թաւ-
ճեան.

ԵՂԵՍԻԱ. ՄԱՐՏԻ.
ՅՕՔԱՆ. Ֆէրհատ աղա Ս. Ֆէրհատ-
եան.
ՏՓԻՍԱ. Պ. Նիկողոսյո Տ. Գևորգեան.
ԿԱՆԿԱՅԱ. Պետրոս աղա Հէքիմեան :